«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ
2018թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի բաժնետերեր և հյուրեր,

Թույլ տվեք ներկայացնել 2018թ. Ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը:

Տարեկան աշխատանքային ծրագրով Ներքին աուդիտն իրականացրել է մի շարք միջոցառումներ՝

1. ***Գլխամասային գրասենյակ***

- ՀՀ ԿԲ 173-Ն որոշման համաձայն տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների համապատասխանության ստուգում:
- Ապառիկ և անգրավ սպառողական վարկերի տրամադրման գործընթացի ստուգում:
- SWIFT համակարգով փոխանցումների գործընթացի համալիր ստուգում:
- Պլաստիկ քարտերի անվանագրման գործընթացի ստուգում:
- ՓՄՁ վարկավորման և գրավով սպառողական վարկավորման գործընթացի ստուգում:
- Հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված միջոցառումների/գործընթացների ստուգում:
- ԴԱՀԿ կողմից արգելանքի դեպքում վարկերի մարման գործընթացի ստուգում:
- Ոսկու գրավով ապահովված վարկերի նպատակային ստուգում:
- Ժամկետանց վարկերի տոկոսների հաշվեգրման դադարեցման, ինչպես նաև մարման ժամանակ տույժերի ու տուգանքների հաշվեգրման ու գանձման գործընթացի ստուգում:
- Բոնուսների հաշվարկման և վճարման գործընթացի ստուգում:
- Մասնաճյուղերի դրամարկղային հանգույցի հանկարծակի գույքագրումներ:
- Ներքին աուդիտի հաշվետվություններում ներկայացված խնդիրների լուծման հետստուգման աշխատանքների իրականացում:

2. ***Տարածքային ստորաբաժանումներ***

Ընդհանուր առմամբ տարվա կտրվածքով ստուգվել են 24 մասնաճյուղ, որից թվով 13-ը ենթարկվել են համալիր ստուգման, իսկ թվով 11-ը՝ կարճատև ստուգման (նպատակային, ըստ ոլորտի):

Արտապլանային ստուգումներ

Ներքին աուդիտը տարվա կտրվածքով իրականացրել է նաև արտապլանային աշխատանքներ, որոնք են՝

- Կանխիկացման սակագների գանձման գործընթացի ուսումնասիրություն:

- Կենսաթոշակային քարտերի հաշիվների գույքագրում:
- <Գործառնական օր> ծրագրում հաստատված գործարքների տվյալների թղթային տարբերակով փոփոխության հնարավորության ստուգում:

Վերստուգման ընթացքում արձանագրված խնդիրները Ներքին աուդիտի կողմից դասակարգվել են հետևյալ կերպ.

- թվով 65 տեղային խնդիր, որոնք տեղ են գտել կոնկրետ ստորաբաժանումների/աշխատակիցների գործունեության կամ անգործության արդյունքում,
- թվով 17 համակարգային խնդիր, որոնց լուծման ուղղությամբ պահանջվում են փոփոխություններ և լրացումներ Բանկի գործող ներքին իրավական ակտերում:

Արձանագրված խնդիրների վերացման ուղղությամբ ձեռնարկվում են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝

- վերստուգման ընթացքում կամ դրանց լուծման նպատակով սահմանվում են պատասխանատու ստորաբաժանումներ/անձիք և ժամկետներ՝ 10-90 օր՝ ելնելով ռիսկի աստիճանից,
- իրականացվում է արձանագրված խնդիրների վերացման նկատմամբ հետհսկողություն՝ դրանց կրկնությունը բացառելու և Բանկի կառավարման մարմինների որոշումների կատարումը ստուգելու նպատակով,
- վերստուգումների ընթացքում բացահայտված տիպային խնդիրները շրջաբերական նամակով պարբերաբար ներկայացվում են Բանկի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներին՝ դրանց ուղղությամբ պահանջվող միջոցառումների և Բանկի կառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների հետ միասին՝ հետագայում կրկնություններից խուսափելու և առկայության դեպքում ուղղելու նպատակով:

Այժմ ներկայացնեմ Ներքին աուդիտի կողմից տրված եզրակացությունը ներքին հսկողության համակարգի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին «Յունիբանկ» ԲԲԸ Ներքին հսկողության համակարգի համապատասխանության եզրակացության համար հիմք են հանդիսացել՝

- Բանկի Ներքին աուդիտի 2018թ. տարեկան աշխատանքային ծրագրի շրջանակներում իրականացված վերստուգումները, դրանց արդյունքում ներկայացված առաջարկությունների ապահովմանն ուղղված միջոցառումները,
- ընթացիկ վերահսկողության և տարեկան աշխատանքային ծրագրի շրջանակներից դուրս Բանկի Ներքին աուդիտի իրականացրած վերստուգումները, դրանց արդյունքում ներկայացված առաջարկությունների ապահովմանն ուղղված միջոցառումները,
- ՀՀ ԿԲ իրականացված համալիր վերստուգման արդյունքներով արձանագրված խնդիրների վերացմանն ուղղված ձեռնարկված միջոցառումները, ներկայացված առաջարկությունների կատարման վերստուգումները:
- Արտաքին աուդիտի վերստուգման արդյունքների հիման վրա «Նամակ ղեկավարությանը» փաստաթղթով ներկայացված առաջարկությունների կատարման վերստուգումները:

Բանկի ներքին հսկողության համակարգում արձանագրված խնդիրները ձեռնարկվող միջոցառումների արդյունքում լուծված են կամ գտնվում են կարգավորման փուլում, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ «Յունիբանկ» ԲԲԸ ներքին հսկողության համակարգը համապատասխանում է ՀՀ ԿԲ կողմից սահմանված ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

«Յունիբանկ» ԲԲԸ Ներքին աուդիտի տնօրեն
Հայկ Սուվարյան
10.06.2019թ.